

**ՌԻՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ \_\_\_\_\_**

ք. Գորիս \_\_\_\_\_ 20\_\_ թ.

Մի կողմից Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն (կրթական գործունեություն) իրականացնող Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ԿԳՆ «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Համալսարան) ի դեմս համալսարանի ռեկտոր Ա.Ա. Ղուկասյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա և մյուս կողմից Համալսարանի \_\_\_\_\_

Ֆակուլտետի \_\_\_\_\_ մասնագիտության \_\_\_\_\_ կուրսի \_\_\_\_\_ խմբում ընդունված ուսանող (այսուհետ՝ Ուսանող կամ սովորող) \_\_\_\_\_, ովքեր ստորև

անուն, հայրանուն, ազգանուն

հիշատակվում են որպես «կողմ» և միասին՝ որպես «կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի իրավական հիմքերը**

1.1. Սույն պայմանագրի իրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը, ՀՀ «Կրթության մասին» օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ենթաօրենսդրական ակտերը, համալսարանի՝ կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները, ներքին իրավական ակտերը և այլ իրավական ակտերը:

**2. Պայմանագրի առարկան**

2.1. Սույն պայմանագրի առարկան ուսանողի՝ \_\_\_\_\_ ձևով,

\_\_\_\_\_  
/Առկա, հեռակա/ /Բակալավր, մագիստրատուրա/  
կրթական ծրագրով՝  
(ընդգծել անհրաժեշտը)

2.1.1. պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար).

2.1.2. վճարովի ուսուցմամբ ուսումնառությունն իրականացնելու ակադեմիական և ֆինանսական կարգն ու պայմաններն են:

2.2. Ուսանողի ուսումնառության ժամկետը \_\_\_\_\_ տարի \_\_\_\_\_ ամիս է:

**3. Համալսարանի պարտականությունները և իրավունքները**

3. 1. Համալսարանը պարտավորվում է.

/ \_\_\_\_\_ / 1 / \_\_\_\_\_ /

3.1.1. հրամանագրել սահմանված կարգով համալսարան ընդունված ուսանողին և կազմակերպել ուսանողի ուսուցումը՝ համաձայն Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատված ուսումնական պլանների և սահմանված կարգով հաստատված առարկայական ծրագրերի.

3.1.2. Կազմակերպել ընթացիկ, կիսամյակային ստուգումներ և քննություններ՝ համաձայն Համալսարանում գործող կարգի.

3.1.3. Ուսանողի համար ստեղծել հնարավորություններ՝ օգտվելու Համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, մարզական և այլ ստորաբաժանումների ծառայություններից.

3.1.4. Ծանոթացնել համապատասխան կրթական ծրագրի իրականացման կարգին, ներքին կարգապահական կանոններին, ուսուցմանն առնչվող այլ փաստաթղթերին.

3.1.5. ուսումնական պլանները կատարելուց, ամփոփիչ ատեստավորում անցնելուց, համապատասխան որակավորում շնորհելու համար անհրաժեշտ — — կրեդիտ ընդհանուր քանակը և ուսումնառության ընթացքում սահմանված նվազագույն ամփոփիչ ՄՈԳ-ը ապահովելուց հետո ուսանողին շնորհել համապատասխան մասնագիտության ————— որակավորման աստիճան և հանձնել ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ.

3.1.6. սույն պայմանագրի 3-րդ բաժնի 3.1. կետի 3.1.5. ենթակետով սահմանված պահանջները չբավարարելու հիմքով ավարտական փաստաթուղթ չստանալու դեպքում ուսանողի ցանկությամբ վերջինիս տրամադրել սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:

3.2. Համալսարանն իրավունք ունի.

3.2.1. Ուսանողները, որոնք չեն կատարում Համալսարանի ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առաջադրանքները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են հասարակական կարգն ու կարգապահության կանոնները, կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների խախտելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում նրանց նկատմամբ կարող են ենթարկվել կարգապահական տույժերի, ընդհուպ մինչև Համալսարանից հեռացվելը.

3.2.2. Վճարովի սովորող ուսանողները, որոնք սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում չեն վճարում ուսման վարձը, կարող են հեռացվել Համալսարանից.

3.2.3. Ուսանողի կողմից տարբեր պատճառներով Համալսարանում ուսումնական գործընթացն ընդհատելու դեպքում լուծվում է սույն պայմանագիրը, և Համալսարանը չի վերադարձնում վճարված ուսման վարձը.

3.2.4. Իր ինքնավարության շրջանակներում կազմակերպել ուսումնական գործընթաց՝ այդ թվում ուսանողների ատեստավորման ձևերը և կարգը, ըստ գործող ուսումնական պլանների և չափորոշիչների.

/ \_\_\_\_\_ /

/ \_\_\_\_\_ /

3.2.5. Ուսումնական տարվա քննությունների և ստուգաքննությունների արդյունքներով համապատասխանաբար ցածր առաջադիմություն ունենալու դեպքում անվճար սովորող ուսանողին փոխադրել վճարովի համակարգ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան .

3.2.6. օրենքներով, համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

#### **4. Ուսանողի պարտականությունները և իրավունքները**

4.1. Ուսանողի հարաբերությունները Համալսարանի հետ կանոնակարգվում են Համալսարանի կանոնադրության 86 և 89 հոդվածներով և սույն պայմանագրով որոշված ուսանողների իրավունքներով և պարտականություններով:

4.2. Ուսանողը պարտավորվում է.

4.2.1. Կատարել Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված իր պարտականությունները .

4.2.2. մասնակցել դասախոսություններին, սեմինար, գործնական և լաբորատոր պարապմունքներին և պարտադիր հաճախել ուսումնական պլանով նախատեսված բոլոր պարապմունքներին, սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված գործառնությունները .

4.2.3. Տիրապետել տվյալ մասնագիտության մասնագիտական կրթական ծրագրերով սահմանված գիտելիքներին, կարողություններին և հմտություններին ու սահմանված ժամկետներում կատարել առարկայական ծրագրերով նախատեսված ուսումնական առաջադրանքները .

4.2.4. սկադեմիական պարտքեր ունենալու դեպքում դրանք հանձնել ռեկտորատի կողմից սահմանված ժամկետներում և կարգով .

4.2.5. Խնամքով և հոգատարությամբ վերաբերվել Համալսարանի գույքին:

4.2.6. ընտրել ուսման վարձի վճարման հետևյալ պայմաններից մեկը՝ ա. ըստ ուսումնական տարվա, բ. ըստ կիսամյակների, գ. ուսումնական տարվա ամիսների՝ ուսման վարձը հավասարաչափ բաժանելով տվյալ ուսումնական տարվա ամիսների թվին, որով կսահմանվի ամսական վճարի նվազագույն չափը: Վճարման պայմանների ընտրության մասին ուսանողը ներկայացնում է դիմում:

4.2.7. Բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը, պահպանել վերջինիս կանոնադրության դրույթները և ներքին կարգապահական կանոնները, կատարել դրանցով սահմանված իր պարտականությունները.

4.2.8. ենթարկվել համալսարանի ներքին իրավական ակտերով սահմանված կանոններին.

4.2.9. պահպանել վարքագծի կանոնները.

4.2.10. սույն պայմանագրով սահմանված ժամկետներում վճարել ուսման վարձը (վճարովի համակարգում սովորող ուսանողները):

4.3. Ուսանողն իրավունք ունի.

/ \_\_\_\_\_ /

/ \_\_\_\_\_ /

4.3.1. մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշիչների պահանջները,

4.3.2. բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ցանկացած այլ ուսումնական դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ բուհի համաձայնությամբ,

4.3.3. մասնակցելու օրենքով կամ բուհի կանոնադրությամբ նախատեսված՝ բուհի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին,

4.3.4. բողոքարկելու բուհի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

4.3.5. ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը և ուսումնական գործընթացին առնչվող նորմատիվ այլ փաստաթղթերին, կնքելու ուսումնառության պայմանագիր.

4.3.6. Ընտրելու մասնագիտություն, ուսուցման ձևը, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը.

4.3.7. Օգտվելու Համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին.

4.3.8. Օգտվելու ուսման տարեկան վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ստանալու սահմանված չափի, ներառյալ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ.

4.3.9. Ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և(կամ) նյութական խրախուսանք՝ ՀՀ օրենսդրությամբ և Համալսարանի կողմից սահմանված կարգով.

4.3.10. Անհրաժեշտության դեպքում ստանալու համապատասխան տեղ հանրակացարանում՝ Համալսարանի կողմից սահմանված կարգով և պայմաններով.

4.3.11. Անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև 1 տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով.

4.3.12. Գտնվելու արձակուրդում՝ տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ ուսուցման առկա ձևով ուսումնառության դեպքում կամ տվյալ պահին ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերով նախատեսված ժամկետով.

/ \_\_\_\_\_ /

/ \_\_\_\_\_ /

4.3.13. Տեղափոխվելու այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ համաձայն ՀՀ Կառավարության սահմանած կարգի:

4.3.14. Մասնակցել ուսումնագիտական, հետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և այլ միջոցառումներին:

4.3.15. օրենքներով, համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

4.4. Կրթությունն ընդհատած նախկին ուսանողն իրավունք ունի վերականգնվելու Համալսարանում:

### **5. Ուսման վճարի չափը և վճարման կարգը**

5.1. Վճարովի սովորող ուսանողների ուսման վարձը \_\_\_\_\_ ուսումնական տարվա համար կազմում է \_\_\_\_\_  
թվերով և տառերով

\_\_\_\_\_ ՀՀ դրամ, կիսամյակի համար \_\_\_\_\_ ՀՀ դրամ, մեկ ամսվա համար \_\_\_\_\_ ՀՀ դրամ:

5.2. Սահմանված ուսման վարձը հաստատուն է ուսանողի ուսումնառության ողջ ժամանակահատվածի համար: Համալսարանից հեռացված (ազատված), ուսումնական ծրագիրը չավարտելու պատճառով կրկնակի ուսուցման թողնված այնուհետև սահմանված կարգով ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողները ուսման վարձը վճարում են նոր պայմանագրով սահմանված չափով:

5.3. Ուսման վարձը վճարվում է փոխանցման կարգով՝ բանկում կազմակերպության բացած հաշվարկային հաշվին:

5.4. Վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման:

5.5. Ուսանողի կողմից սույն պայմանագիրը միակողմանի լուծելու կամ ուսանողի հեռացման դեպքում տվյալ կիսամյակի վճարված ուսման վճարը չի վերադարձվում:

5.6. Սույն պայմանագրի 5.1-5.5 կետերը չեն տարածվում այն ուսանողների վրա, ովքեր սովորում են անվճար համակարգում:

### **6. Պայմանագիրն ուժի մեջ մտնելը և գործողության ժամկետը**

6.1 Սույն պայմանագիրը գործում է \_\_\_\_\_ 20\_\_\_\_ թ.-ից մինչև \_\_\_\_\_ 20\_\_\_\_ թ.

6.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է համապատասխան կրթական ծրագրով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար՝ բացառությամբ պայմանագրի 7-րդ բաժնում նշված դեպքերի:

6.3. Սովորողի՝ համալսարանից հեռացումը, ազատումը կամ տեղափոխումը հիմք են սույն պայմանագրի վաղաժամկետ լուծման համար:

### **7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը**

/ \_\_\_\_\_ /

5

/ \_\_\_\_\_ /

7.1. Համալսարանի կողմից սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման հետևյալ դեպքերում՝

7.1.1. Ուսանողի անբավարար ակադեմիական առաջադիմության,

7.1.2. Ուսանողի կողմից տարբեր պատճառներով ուսումնական գործընթացի ընդհատման,

7.1.3. Ուսանողի կողմից Համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու,

7.1.4. Վճարովի համակարգում սովորող ուսանողի կողմից սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական պարտավորությունները չկատարելու .

7.1.5. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել՝ կողմերի պայմանագրով ստանձնած այլ պարտականությունները չկատարելու, ուսանողի նախաձեռնությամբ, համալսարանից ուսանողի հեռացման դեպքերում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

## **8. Հատուկ պայմաններ**

8.1. Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով Համալսարան ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ուսանողներին Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության Կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:

8.2. Վճարովի ուսուցմամբ սովորողները կարող են օգտվել ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Ուսանողի՝ տարբեր պատճառներով Համալսարանից ազատվելու դեպքում վճարած ուսման վարձը ենթակա է վերահաշվարկման:

## **9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը**

9.1. Սույն պայմանագրով անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրիեղէր, հրդեհ, երկրաշարժ և այլ տարերային աղետներ, պատերազմ, ռազմական գործողություններ զինված հարձակում, զանգվածային անկարագություններ, գործադուլներ և այլն:

9.2. Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագրի կնքումից հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չեն կարող կանխել կամ կանխագուշակել, և, որի պատճառով կողմերը չեն կարող մասնակիորեն կամ լրիվ կատարել իրենց վրա վերցրած պարտականությունները:

9.3. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է մեկ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

/ \_\_\_\_\_ /

6

/ \_\_\_\_\_ /

## 10. Եզրափակիչ դրույթներ

10.1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն նույն իրավաբանական ուժը, որոնցից մեկական օրինակ ի պահ է հանձնված կողմերին:

10.2. Սույն պայմանագրում փոփոխություններն ու լրացումները կատարվում են միայն գրավոր կերպով: Այդ փոփոխություններն ու լրացումները կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա անբաժանելի մասը:

10.3. Ակադեմիական փոխատեղման(ռոտացիա) դեպքում սույն պայմանագրի համապատասխան դրույթները տարածվում են անվճար համակարգից վճարովի անցած սովորողների վրա:

10.4. Կողմերի միջև սույն պայմանագրի շուրջն առաջացած վեճերը լուծվում են կողմերի անմիջական բանակցությունների միջոցով:

10.5. Անմիջական բանակցություններ սկսելու օրվանից մեկ ամսվա ընթացքում տարաձայնությունները չլուծվելու կամ դրանց լուծման ուղղությամբ առաջընթաց չլինելու դեպքում վեճը ենթակա է լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.6. Ուսանողը ծանոթացել է համալսարանի լիցենզիային, կանոնադրությանը, ներքին կարգապահական կանոնակարգին, ուսումնական գործընթացն ապահովող իրավական ակտերին, որը հավաստում է սույն պայմանագիրը ստորագրելով և վերը նշված փաստաթղթերի վերաբերյալ չպարզաբանված հարցեր չունի, նրան բացատրված է սույն պայմանագրի բոլոր դրույթները, նա պայմանագրի բովանդակության և դրա մեկնաբանության հետ կապված հարցեր չունի:

10.7. Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 11. Կողմերի հասցեները, ստորագրությունները և այլ տվյալներ

1. Գործիսի պետական համալսարան

2. Ուսանող

Հեռ. 0284 2-27-67, 098 196701

Ազգանուն Անուն Հայրանուն

Հասցե՝ 3205, ք. Գորիս, Ավանգարդ 2  
h/h 1510014935100100  
ՀՎՀՀ 09210606

Անձնագրի սերիա \_\_\_\_\_ № \_\_\_\_\_  
Տրված է \_\_\_\_\_ 20 \_\_\_\_ թ.  
Ում կողմից

Ռեկտոր՝ Ա.Ա. Ղուկասյան

Գրանցված է

Հեռ.՝ \_\_\_\_\_

Ստորագրություն

ստորագրություն

կ. տ.

/ \_\_\_\_\_ /

7

/ \_\_\_\_\_ /

կ. տ

/ \_\_\_\_\_ /

8

/ \_\_\_\_\_ /